

ՈՒՂԵՑՈՒՅՑ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ
ՓԱՍՏԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՐԳԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հրապարակվում է ՀՀ-ում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան ֆինանսական աջակցությամբ իրականացվող՝ «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավական իրազեկման և կարողությունների հզորացման» ծրագրի շրջանակներում:

ԵՐԵՎԱՆ 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ՝ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....6

1.1. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՐՏԱԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ.....6

1.1.1. Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման այլ արտադատական կարգերը սպառելը.....6

1.1.2. Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման նոտարական կարգը...7

1.2. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ.....11

1.2.1. Դատական կարգով իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման առանձնահատկությունները.....11

1.2.2. Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վերաբերյալ գործերի տարածքային ընդդատությունը.....13

1.2.3. Իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման համար անհրաժեշտ պայմանը14

1.2.4. Իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման վերաբերյալ դիմումը և դրան ներկայացվող պահանջները17

1.2.5. Դիմումը ներկայացվելուց հետո դատարանի կողմից կայացվող որոշումները....18

1.2.6. Դիմումի վերադարձման հիմքերը.....19

1.2.7. Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման գործերով դատարանի վճիռը21

2. ՄԱՀՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ.....22

2.1. ՄԱՀՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ՝ ՀՀ ԱՆ ՔԿԱԳ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ22

2.1.1. Մահվան պետական գրանցման դիմում ներկայացնելու կարգը.....22

2.1.2. Մահվան պետական գրանցման հիմքերը 23

2.1.3. Մահվան պետական գրանցման դիմումը և դրան ներկայացվող պահանջները 24

2.1.4. Մահվան պետական գրանցման ժամկետները և դրա դիմաց գանձվող պետական տուրքը.....25

2.1.5. Մահվան պետական գրանցման դիմումի մերժման հիմքերը 26

2.2. ՄԱՀՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆՈՏԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԸ27

2.2.1. Նոտարական կարգով մահվան գրանցման դիմում ներկայացնելու պարտադիր նախապայմանը 27

2.2.2. Մահվան գրանցման դիմումը և դրան ներկայացվող պահանջները28

2.2.3. Մահվան գրանցման համար դիմում ներկայացնելիս վճարման ենթակա պետական տուրքը28

2.2.4. Մահվան գրանցումը հաստատելու վերաբերյալ նոտարական ակտը29

2.3. ՄԱՀՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ.....31

2.3.1. Դատական կարգով մահվան պետական գրանցման պարտադիր նախապայմանը31

2.3.2. Մահվան պետական գրանցման վերաբերյալ գործերի տարածքային ընդդաստոյությունը32

2.3.3. Մահվան պետական գրանցման դիմումը և դրան ներկայացվող պահանջները33

2.3.4. Մահվան պետական գրանցման դիմաց գանձվող պետական տուրքը34

2.3.5. Դիմումի վերադարձման հիմքերը և այն շտկելու ժամկետները 34

3. ՀԱՅՐՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ37

3.1. ՀԱՅՐՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ՝ ՀՀ ՔԿԱԳ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ37

3.1.1. Հայրության ճանաչման պետական գրանցման հիմքերը 37

3.1.2. Հայրության ճանաչման պետական գրանցման դիմում ներկայացնելու կարգը38

3.1.3. Հայրության ճանաչման պետական գրանցման դիմումը և դրան ներկայացվող պահանջները39

3.1.4. Հայրության ճանաչման պետական գրանցման կարգը41

3.1.5. Հայրության ճանաչման պետական գրանցման մերժման հիմքերը42

ՀԱՎԵԼՎԱԾ- ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԵՐ...44

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Եթե ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ ունեցող անձ էք և Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանման կամ ռազմական գործողությունների արդյունքում (դրանից հետո) առաջացել են իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման խնդիրներ (օրինակ՝ բացակայում է ծննդյան վկայականը, աշխատանքային գրքույկը (կորսվել կամ ոչնչացվել է), առաջացել է մահվան փաստի կամ հայրության ճանաչման անհրաժեշտություն), ապա կարող էք օգտվել ներքոթվարկյալ իրավական կառուցակարգերից:

1.1. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՐՏԱԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերն այն փաստերն են, որոնցից կախված է քաղաքացիների կամ իրավաբանական անձանց անձնական կամ գույքային իրավունքների ծագումը, փոփոխումը կամ դադարումը: Օրինակ՝ ազգակցական հարաբերությունների առկայության, հայրության ճանաչման, մահվան ճանաչման վերաբերյալ փաստերը և այլն:

1.1.1. Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման այլ արտադատական կարգերը սպառելը

Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման համար անձը պետք է դիմում ներկայացնի ՀՀ ԱՆ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն (օրինակ՝ մահվան պետական գրանցման համար) կամ այլ համապատասխան իրավասու պետական մարմին (օրինակ՝ աշխատանքային գրքույքի կորստի դեպքում աշխատանքային ստաժի հաշվառման համար անձը նախ պետք է դիմի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն), որոնց կողմից մերժում ստանալու դեպքում միայն անձը կարող է դիմել նոտարին՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատումը նոտարական կարգով իրականացնելու համար, իսկ նոտարական կարգով ևս իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման անհնարինության դեպքում (մերժման որոշման կամ համապատասխան գրության առկայության դեպքում)՝ անձը կարող է դիմել դատարան:

1.1.2. Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման նոտարական կարգը

Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման արտադատական կարգը սահմանված է «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 17.1-րդ գլխով:

Օրենքի 81.1-ին հոդվածի 2-րդ մասը նոտարի կողմից հաստատվող փաստերի շարքին է դասում, ի թիվս այլնի՝

- ✓ **անձանց ազգակցական հարաբերությունները,**
- ✓ **ծննդյան,**
- ✓ **որդեգրման,**
- ✓ **ամուսնության,**
- ✓ **ամուսնալուծության,**
- ✓ **մահվան գրանցումը,**
- ✓ **իրավունք սահմանող փաստաթղթերի պատկանելությունը (բացառությամբ անձնագրի և զինվորական փաստաթղթերի),**
- ✓ **սեփականության իրավունքով գույքի տիրապետումը:**

Իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման վերաբերյալ դիմումը պետք է պարունակի՝

(1) նշում առ այն, թե **ինչ նպատակի համար է դիմողին անհրաժեշտ** տվյալ փաստի հաստատումը,

(2) դիմողի կողմից պատշաճ փաստաթղթեր ստանալու կամ կորցրած փաստաթղթերը վերականգնելու **անհնարիներությունը հաստատող ապացույցներ:**

Օրենսդիրը նոտարի կողմից իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման համար սահմանում է պարտադիր նախապայման, այն է՝ Օրենքի 81.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նոտարն իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատում է միայն այն դեպքում, եթե **դիմողը հնարավորություն չունի այլ արտադատական**

կարգով (օրինակ՝ ՀՀ ԱՆ ՔԿԱԳ գործակալությունից կամ այլ համապատասխան իրավասու մարմնից) ստանալու այդ փաստը հավաստող պատշաճ փաստաթղթեր կամ անհնար է վերականգնել կորցրած փաստաթղթերը (օրինակ՝ առկա է քաղաքացիական կացության ակտային գրանցումը վերականգնելը մերժելու մասին ՀՀ ԱՆ ՔԿԱԳ գործակալության որոշում):

Իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու վերաբերյալ նոտարը կայացնում է ակտ: Օրենքի 81.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նոտարական ակտը հիմք է համապատասխան մարմինների կողմից այդ փաստը գրանցելու կամ հաստատված փաստի կապակցությամբ ծագած իրավունքները ձևակերպելու համար:

Օրենքի 81.1-ին հոդվածի 7-րդ մասը սահմանում է, որ իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու վերաբերյալ նոտարական ակտը կարող է օգտագործվել միայն նոտարական ակտում նշված նպատակով:

Նոտարն ընդունում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու վերաբերյալ նոտարական ակտ, եթե՝

(1) ներկայացված փաստաթղթերը կամ վկայի ցուցմունքը բավարար են իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու համար.

(2) հաստատման ենթակա իրավաբանական նշանակություն ունեցող փաստը բխում է ներկայացված փաստաթղթերում առկա տվյալներից կամ վկայի ցուցմունքից.

(3) բացակայում է նյութախրավական նորմերի պահանջների հետ անհամապատասխանությունը.

(4) դիմողը հնարավորություն չունի այլ արտադատական կարգով ստանալու կամ վերականգնելու իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հավաստող փաստաթղթերը, կամ դրա հնարավորությունն օրենքի ուժով սպառված է.

(5) պահպանված են Օրենքի 81.1-ին հոդվածի 4-րդ մասի պահանջները (*այն է՝ դիմումը պարունակում է նշում, թե ինչ նպատակի համար է դիմողին անհրաժեշտ տվյալ փաստի հաստատումը, ինչպես նաև բերվում են դիմողի կողմից պատշաճ փաստաթղթեր ստանալու կամ կորցրած փաստաթղթերը վերականգնելու անհնարիներությունը հաստատող ապացույցներ*), վկայից ցուցմունք վերցնելու դեպքում՝ նույն հոդվածի 4.1-ին մասի պահանջները (*այն է՝ դիմողի գրավոր միջնորդության հիման վրա նոտարը կարող է ցուցմունք վերցնել վկայից: Վկայի ներկայությունն ապահովում է դիմողը, ընդ որում՝ նոտարի մոտ ցուցմունք տալը վկայի իրավունքն է: Վկայից ցուցմունք վերցնելիս նոտարը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթներով՝ այնքանով, որքանով դրանք կիրառելի են նշյալ հոդվածի դրույթների նկատմամբ¹*).

¹ Նոտարը նախագրուշացնում է վկային սուտ ցուցմունք տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին, որի վերաբերյալ վկան ստորագրում է, և որը կցվում է նոտարական գործին: Ցուցմունքն արձանագրում է նոտարը, այն ստորագրում է վկան, և արձանագրությունը կցվում է

(6) իրավաբանական նշանակություն ունեցող փաստն անվիճելի է:

Վերոնշյալ պահանջները պահպանված չլինելու դեպքում նոտարը մերժում է փաստի հաստատումը:

Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձը, որի շահերը շոշափում է նոտարի գործողությունը կամ անձը, որին մերժվել է նոտարական գործողություն կատարելը, կարող է կատարված նոտարական գործողությունը կամ նոտարական գործողության կատարումը մերժելը բողոքարկել դատարան: Մասնավորապես՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **վարչական դատարանին** ընդդատյա են նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերը:

1.2. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ

1.2.1. Դատական կարգով իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման առանձնահատկությունները

Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման գործերով վարույթը և դրա առանձնահատկությունները սահմանվում

նոտարական գործին: Ցուցումները կարող է նաև ձայնագրվել, որի դեպքում ձայնագրման կրիչը կցվում է նոտարական գործին:

են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 29-րդ գլխում: Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման գործերը ենթակա են քննության հատուկ վարույթի կարգով: Հատուկ վարույթը բնորոշվում է հետևյալ հատկանիշներով՝

- սույն դեպքում իրավունքի մասին վեճ առկա չէ, քանի որ դիմողն այլ անձանց որևէ նյութաիրավական պահանջ չի ներկայացնում,

- հատուկ վարույթում անձինք ներգրավվում են դիմողների կամ շահագրգիռ այլ անձանց կարգավիճակով,

- հատուկ վարույթում իրականացվում է դիմումի հիման վրա:

Այսպիսով, հատուկ վարույթի գործերով շահագրգիռ անձը որևէ մեկի դեմ որևէ պահանջ չի ներկայացնում, և այդ գործերով բացակայում է դատարանի քննությանը ենթակա (ներառյալ լուծմանը հանձնված) իրավունքի մասին վեճը (*տե՛ս թիվ ԵՄԴ/3384/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.08.2016 թվականի որոշումը*):

Այլ կերպ՝ հատուկ վարույթի կարգով դատարանի հաստատմանն է ենթակա քաղաքացիների իրավունքների ծագման, փոփոխման կամ դադարման հիմք հանդիսացող իրավաբանական փաստերի առկայությունը կամ բացակայությունը, քաղաքացու որոշակի իրավական վիճակը կամ նրան պատկանող իրավունքը:

Օրենսգրքի 237-րդ հոդվածի 2-րդ մասը փաստերի հաստատման վերաբերյալ գործերի շարքին է դասում, ի թիվս այնի՝

- ✓ **անձանց ազգակցական հարաբերությունները,**
- ✓ **ծննդյան,**
- ✓ **որդեգրման,**
- ✓ **ամուսնության,**
- ✓ **ամուսնալուծության,**
- ✓ **մահվան գրանցումը,**
- ✓ **իրավունք սահմանող փաստաթղթերի պատկանելությունը (բացառությամբ անձնագրի և զինվորական փաստաթղթերի),**
- ✓ **սեփականության իրավունքով գույքի տիրապետումը:**

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանն օրենքով նախատեսված դեպքերում քննում է իրավաբանական նշանակություն ունեցող այլ փաստեր:

1.2.2. Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վերաբերյալ գործերի տարածքային ընդդատությունը

Օրենսգրքի 238-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վերաբերյալ գործերը քննվում են **դիմողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակվելու վայրի դատարանում,** բացառությամբ անշարժ գույքը սեփականության իրավունքով տիրապետելու փաստը հաստատելու վերաբերյալ գործերի, որոնք քննվում են անշարժ գույքի գտնվելու վայրի դատարանում:

1.2.3. Իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման համար անհրաժեշտ պայմանը

Օրենսդիրը դատարանի կողմից իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման համար սահմանում է պարտադիր նախապայման, այն է՝ համաձայն Օրենսգրքի 239-րդ հոդվածի 1-ին մասի՝ դատարանն իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատում է միայն այն դեպքում, եթե դիմողը հնարավորություն չունի այլ արտադատական կարգով (ՀՀ ԱՆ ՔԿԱԳ գործակալության, համապատասխան իրավասու մարմնի միջոցով), բացառությամբ իրավաբանական նշանակություն ունեցող փաստը նոտարի կողմից հաստատելու կարգի, ստանալու այդ փաստը հավաստող պատշաճ փաստաթղթեր կամ անհնար է վերականգնել կորցրած փաստաթղթերը:

Հարկ է նկատի ունենալ, որ թեև Օրենսգիրքն ուղղակի սահմանում է, որ դատարանն իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատում է միայն այն դեպքում, եթե դիմողը հնարավորություն չունի այլ արտադատական կարգով հաստատելու (բացառությամբ իրավաբանական նշանակություն ունեցող փաստը նոտարի կողմից հաստատելու կարգի), սակայն դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ դատարաններն իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման նոտարական կարգը սպառելը ևս դիտարկում են որպես իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման պարտադիր նախապայման, իսկ բոլոր այն դեպքերում, երբ անձը չի

սպառել իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման նոտարական կարգը, դատարանները վերադարձնում են դիմումը, (տե՛ս օրինակ, քաղաքացիական գործերով թիվ ԵԴ2/0398/02/24, ՏԴ/4062/02/23, ԵԴ/11664/02/23, ԵԴ/4421/02/23 կայացված դատական ակտերը):

Ուստի՝ հաշվի առնելով արդեն իսկ ձևավորված կայուն պրակտիկան՝ մինչ դատարան դիմելն անձը պետք է սպառի իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման նոտարական կարգը²:

² Ակտենք, որ հանդիպում են նաև ասվածին տրամագծորեն հակառակ մոտեցումներ, որոնք, սակայն, դատական պրակտիկայում եզակի հանդիպող դատական ակտեր են: Օրինակ թիվ ԵԴ2/30654/02/23 քաղաքացիական գործով Վերաքննիչ քաղաքացիական դատարանն արձանագրել է հետևյալը.

«(...) գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված է անձի սուբյեկտիվ իրավունքների իրացման համար անհրաժեշտ իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի դատական կարգով հաստատման հնարավորություն, որպիսի փաստերի ցանկը նույն օրենսգրքով սպառիչ թվարկված չէ, որպիսի պայմաններում նման կարգով հաստատման ենթակա փաստեր կարող են սահմանվել նաև այլ օրենքներով: (...)

(...) Այսինքն, այն դեպքում, երբ Դիմողը օրենքով սահմանված կարգով հնարավորություն ունի իր սուբյեկտիվ իրավունքների իրացման նպատակով ընտրելու ակնկալվող փաստի հաստատման դատական և արտադատական (նոտարական) մեխանիզմներից որևէ մեկը, վերջինիս կողմից իրավունքի պաշտպանության ընտրության հարցը պետք է դիտարկել որպես Դիմողի իր իրավունքի պաշտպանության եղանակի ազատ ընտրության իրացում, և Դատարանի մատնանշած այլընտրանքային՝ նոտարական կարգով իրավաբանական փաստի հաստատման ընթացակարգի առկայությունը չի կարող հիմք հանդիսանալ անձի իրավունքի, դատական պաշտպանությունը սահմանափակելու համար՝ նկատի ունենալով, որ 16.07.2020 թվականի թիվ ՀՕ-392-Ն ՀՀ օրենքի խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 239-րդ հոդվածի տառացի մեկնաբանությունից բխում է, որ նոտարին դիմելու հնարավորության առկայությունը

Օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով: Տվյալ դեպքում «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 81.1-ին հոդվածի 10-րդ մասով նախատեսված է, որ նոտարը մերժում է փաստի հաստատումը, հետևաբար՝ Օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված փաստաթղթեր ստանալու անհնարինությունը պետք է հաստատվի իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելը մերժելու մասին նոտարական ակտով: Ուստի՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման պահանջի դեպքում, որպես դիմողի կողմից պատշաճ փաստաթղթերը ստանալու անհնարինությունը հաստատող ապացույց, պետք է ներկայացվի արտադատական կարգով, մասնավորապես՝ ՀՀ ԱՆ ՔԿԱԳ գործակալության կամ այլ համապատասխան իրավասու մարմնի, ինչպես նաև «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման մերժումը, այսինքն՝ դիմողը պետք է սպառի արտադատական կարգով իրավաբանական փաստի հաստատման հնարավորությունները:

Այլ խոսքով՝ այն դեպքերում, երբ օրենսդրությամբ սահմանված կարգով առկա է դիմողին անհրաժեշտ փաստը հաստատելու այլ կարգ ևս, ապա դիմողը կարող է դիմել դատարան

չի սահմանափակում նույն փաստի հաստատման պահանջով Դատարան դիմելու հնարավորությունը»:

արտադատական կարգով անհրաժեշտ փաստաթղթեր ստանալու բոլոր հնարավոր եղանակները սպառելուց հետո՝ ներկայացնելով օրենքով սահմանված արտադատական եղանակները սպառած լինելու ապացույցներ:

1.2.4. Իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման վերաբերյալ դիմումը և դրան ներկայացվող պահանջները

Օրենսգրքի 121-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ **դիմումի նկատմամբ տարածվում են հայցադիմումի համար սահմանված պահանջները**, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով, կամ այլ բան չի բխում համապատասխան վարույթի էությունից:

Իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման վերաբերյալ դիմումը, ի թիվս Օրենսգրքի 121-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների (*այն է՝ հայցադիմումում պարտադիր նշվում են՝ (1) դատարանի անվանումը, որին ներկայացվում է հայցադիմումը, (2) դիմողի անունը, (3) հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն, ծանուցման հասցեն (եթե այն տարբերվում է հաշվառման (գտնվելու) վայրի հասցեից), այդ թվում՝ հայցվոր քաղաքացու անձը հաստատող փաստաթղթի տվյալները (այսուհետ՝ անձնագրային տվյալներ), (4) այն փաստերը, որոնց վրա հիմնվում է դիմումը, (5) դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի և ապացույցների ցանկը*), պետք է պարունակի

(1) նշում առ այն, թե ինչ նպատակի համար է դիմողին անհրաժեշտ տվյալ փաստի հաստատումը,

(2) դիմողի կողմից պատշաճ փաստաթղթեր ստանալու կամ կորցրած փաստաթղթերը վերականգնելու անհնարիությունը հաստատող ապացույցներ (օրինակ՝ քաղաքացիական կացության ակտային գրանցումը վերականգնելը մերժելու մասին ՀՀ ԱՆ ՔԿԱԳ մարմնի որոշում):

Հարկ է նշել, որ եթե հայցը կամ դիմումը ներկայացվում է հայցվորի կամ դիմողի ներկայացուցչի կողմից, ապա հայցադիմումում կամ դիմումում պարտադիր պետք է նշվեն ներկայացուցչի անձնագրային տվյալները և վերջինիս ծանուցման հասցեն:

Սույն դեպքում դիմումն ստորագրում է դիմողը կամ նրա ներկայացուցիչը: Ներկայացուցչի միջոցով դիմումը դատարան ներկայացնելիս ստորագրած դիմումին կցվում են ներկայացուցչի լիազորությունը հավաստող փաստաթուղթը և անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

1.2.5. Դիմումը ներկայացվելուց հետո դատարանի կողմից կայացվող որոշումները

Օրենսգրքի 124-րդ հոդվածի համաձայն՝ հայցադիմումը (սույն դեպքում՝ դիմումը) ներկայացվելուց հետո՝ *յոթնօրյա ժամկետում*, առաջին ատյանի դատարանը կայացնում է որոշում՝ (1) հայցադիմումը վարույթ ընդունելու մասին, (2) հայցադիմումի ընդունումը մերժելու մասին, (3) հայցադիմումը վերադարձնելու մասին:

1.2.6. Դիմումի վերադարձման հիմքերը

Օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը վերադարձնում է հայցադիմումը (սույն դեպքում՝ դիմումը), եթե.

(1) չեն պահպանվել Օրենսգրքով հայցադիմումի ձևին, բովանդակությանը և կից փաստաթղթերին ներկայացվող պահանջները,

(2) չի ներկայացվել օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը կամ համապատասխան գանձապետական հաշվին փոխանցումը հավաստող համապատասխան ծածկագիրը՝ տրամադրված վճարահաշվարկային կազմակերպության կողմից, իսկ այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումից ազատելու, դրա վճարումը հետաձգելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն, ապա բացակայում է դրա վերաբերյալ միջնորդությունը, կամ դատարանն այն չի բավարարել,

(3) հայցադիմումը ստորագրված չէ, կամ ստորագրել է այն ստորագրելու լիազորություն չունեցող անձը,

(4) հայցվորը չի պահպանել մինչև դատարան դիմելը կողմերի միջև առկա վեճի կարգավորման օրենքով նախատեսված արտադատական կարգը:

Այն դեպքերում, երբ չեն պահպանվել դիմումի ձևին, բովանդակությանը և կից փաստաթղթերին ներկայացվող պահանջները, այդ թվում՝

դիմումին չի կցվել պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը կամ համապատասխան գանձապետական հաշվին փոխանցումը հավաստող համապատասխան ծածկագիրը, կամ դիմումն ստորագրված չէ, դատավորի աշխատակազմը կարող է հաղորդակցության միջոցով (առկայության դեպքում) տեղեկացնել դիմողին դիմումում առկա թերությունների մասին՝ առաջարկելով եռօրյա ժամկետում վերացնել դրանք: Նման միջոցով տեղեկացման անհնարինության դեպքում դատավորի աշխատակազմը նույն ժամկետում կարող է կազմել դիմումում առկա թերությունների մասին արձանագրություն՝ նշելով առկա թերություններն՝ արձանագրությունն ստանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում վերացնելու անհրաժեշտության մասին: Նշված արձանագրությունը ոչ ուշ, քան կազմման հաջորդ օրն ուղարկվում է հայցվորին:

Նշված թերությունները չվերացվելու կամ դիմումը վերադարձնելու այլ հիմքերի առկայության դեպքում առաջին ատյանի դատարանը որոշում է կայացնում դիմումը վերադարձնելու մասին:

Այն դեպքերում, երբ դիմումում առկա թերությունների վերացման համար դիմողը չի տեղեկացվում, այդ թվում՝ երբ արձանագրություն չի կազմվում, առաջին ատյանի սահմանված ժամկետում կայացնում է դիմումը վերադարձնելու մասին որոշում՝ այն դիմումի և դրան կից փաստաթղթերի հետ ուղարկելով դիմողին:

Դիմումի թերությունները վերացնելու համար Դատարանը տրամադրում է եռօրյա ժամկետ՝ սկսած դիմումը վերադարձնելու մասին որոշումն ստանալու պահից:

Եռօրյա ժամկետում դիմումի թերությունները վերացվելու և այն դատարան կրկին ներկայացվելու դեպքում դիմումը համարվում է առաջին ատյանի դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը:

1.2.7. Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման գործերով դատարանի վճիռը

Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման գործերով դատարանը, համաձայն Օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին մասի, կայացնում է **վճիռ, որում պետք է շարադրվի հաստատված փաստը**: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու վերաբերյալ դատարանի վճիռը հիմք է համապատասխան մարմինների կողմից այդ փաստը գրանցելու կամ հաստատված փաստի կապակցությամբ ծագած իրավունքները ձևակերպելու համար*:

2. ՄԱՀՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2.1. ՄԱՀՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ՝ ՀՀ ԱՆ ՔԿԱԳ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ

«Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ ՔԿԱԳ մասին օրենք) 11-րդ գլուխը սահմանում է մահվան պետական գրանցման կարգը:

2.1.1. Մահվան պետական գրանցման դիմում ներկայացնելու կարգը

Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման կամ սույն օրենքով սահմանված այլ գործառույթներ կատարելու նպատակով դիմումները ՔԿԱԳ գործակալություն են ներկայացվում Էլեկտրոնային եղանակով կամ սպասարկման կենտրոնների միջոցով:

Սպասարկման կենտրոնների միջոցով դիմում ներկայացնելու դեպքում դիմում ներկայացնելու պահանջը համարվում է կատարված, եթե դիմողը սպասարկման կենտրոնի աշխատակցին տրամադրում է դիմումը պատրաստելու համար անհրաժեշտ ամբողջական տեղեկատվությունը (փաստաթղթերը) և ստորագրում պատրաստված դիմումը:

ՔԿԱԳ մասին օրենքով սահմանված գործառույթներ կատարելու համար իրավասու անձը կարող է դիմում ներկայացնել սպասարկման կենտրոն նաև լիազորված անձի միջոցով, եթե ՔԿԱԳ մասին օրենքով այլ բան նախատեսված չէ: Լիազորված անձի միջոցով դիմում ներկայացնելու դեպքում ներկայացվում են նաև լիազորած անձի անձը հաստատող

փաստաթղթի տվյալները և նրա տրամադրած հասարակ լիազորագիրը, եթե այլ բան նախատեսված չէ ՔԿԱԳ մասին օրենքով, ինչպես նաև լիազորված անձի անձը հաստատող փաստաթուղթը:

Մահվան պետական գրանցման դիմումի ձևանմուշ՝ Ձևաթուղթ N 1 (համաձայն՝ ՀՀ Արդարադատության նախարարի՝ 2022թ. հուլիսի 14-ի N 373-Ն հրամանի «Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման դիմումների, քաղաքացիական կացության ակտային գրանցումների, դրանց հիման վրա կատարվող հաղորդումների ձևանմուշները հաստատելու մասին»):

2.1.2. Մահվան պետական գրանցման հիմքերը

ՔԿԱԳ մասին օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մահվան պետական գրանցման հիմքերն են՝

(1) բժշկական կազմակերպության կամ բժշկի տված՝ մահը հաստատող սահմանված ձևի փաստաթուղթը.

(2) անձի մահվան փաստի հաստատման կամ անձին մահացած ճանաչելու մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը.

(3) «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով նոտարի հաստատած իրավաբանական փաստի մասին նոտարական ակտը:

Ընդ որում՝ անձի մահը ենթակա է գրանցման առանց ժամկետային սահմանափակման:

2.1.3. Մահվան պետական գրանցման դիմումը և դրան ներկայացվող պահանջները

Մահվան պետական գրանցման համար կարող է դիմել յուրաքանչյուր անձ:

Օրենքի 61-րդ հոդվածը սահմանում է մահվան պետական գրանցման համար դիմումին ներկայացվող պահանջերը, ինչպես նաև կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը: Այսպես՝

Դիմումին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

(1) բժշկական կազմակերպության կամ բժշկի տված՝ մահը հաստատող սահմանված ձևի փաստաթուղթը.

(2) դիմողի անձը հաստատող փաստաթուղթը.

(3) մահացած անձի անձը հաստատող փաստաթուղթը կամ դրա տվյալները.

(4) անձի մահվան փաստի հաստատման կամ անձին մահացած ճանաչելու մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի պատճենը.

(5) «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով նոտարի հաստատած իրավաբանական փաստի մասին նոտարական ակտը:

Դիմումում նշվում են հետևյալ տեղեկությունները.

(1) մահացածի անունը, հայրանունը, ազգանունը, ազգությունը (ազգությունը նշվում է մահացածի անձը հաստատող փաստաթղթերում՝ դրա առկայության դեպքում), ծննդյան վայրը և ժամանակը, սեռը, քաղաքացիությունը, մահացածի վերջին բնակության վայրը, ընտանեկան դրությունը, մահվան վայրը և ժամանակը.

(2) մահացածի անձը հաստատող փաստաթղթերի տվյալները.

(3) մահվան փաստը հաստատող փաստաթղթերի տվյալները.

(4) դիմում ներկայացնող անձի անունը, հայրանունը, ազգանունը և անձնագրային տվյալները.

(5) անհրաժեշտ այլ տեղեկություններ:

2.1.4. Մահվան պետական գրանցման ժամկետները և դրա դիմաց գանձվող պետական տուրքը

Մահվան պետական գրանցումը կատարվում է մահվան պետական գրանցման դիմումը և դրան կից անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու **նույն աշխատանքային օրը:**

Մահվան պետական գրանցման դիմաց պետական տուրք չի գանձվում:

2.1.5. Մահվան պետական գրանցման դիմումի մերժման հիմքերը

ՔԿԱԳ մասին օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակային վերլուծությանից հետևում

է, որ գործակալությունը մահվան պետական գրանցումը մերժում է, եթե՝

(1) պահանջը չի հիմնավորվում դիմումին կից ներկայացվող փաստաթղթերով կամ տեղեկություններով.

(2) չեն պահպանվել օրենսդրությամբ նախատեսված պահանջները.

Դիմումը մերժելու մասին որոշումը պետք է պարունակի մերժման իրավական բոլոր հիմքերը, ներկայացված փաստաթղթերում առկա և գրանցմանը խոչընդոտող բոլոր հանգամանքները:

Քաղաքացիական կացության ակտի պետական գրանցումը կամ դրանից բխող այլ գործառույթ կատարելը մերժելու դեպքում այդ մասին հայցվող գործողության կատարման համար ՔԿԱԳ մասին օրենքով սահմանված ժամկետում դիմողին տրամադրվում է դիմումը մերժելու մասին որոշում, որը պետք է պարունակի մերժման իրավական բոլոր հիմքերը, ներկայացված փաստաթղթերում առկա և գրանցմանը կամ հայցվող գործողության կատարմանը խոչընդոտող բոլոր հանգամանքները:

Մահվան պետական գրանցման մերժման որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:

2.2. ՄԱՀՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆՈՏԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման արտադատական

կարգը սահմանված է «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17.1-րդ գլխով:

Օրենքի 81.1-րդ հոդվածի 2-րդ մասը նոտարի կողմից հաստատվող փաստերի շարքին է դասում, ի թիվս այլնի, մահվան գրանցումը:

2.2.1. Նոտարական կարգով մահվան գրանցման դիմում ներկայացնելու պարտադիր նախապայմանը

Մահվան գրանցման նոտարական կարգին կարելի է դիմել, եթե՝

(1) դիմողը հնարավորություն չունի այլ արտադատական կարգով (ՀՀ ԱՆ ՔԿԱԳ գործակալությունից) ստանալու այդ փաստը հավաստող պատշաճ փաստաթղթեր,

կամ

(2) անհնար է վերականգնել կորցրած փաստաթղթերը (օրինակ՝ առկա է քաղաքացիական կացության ակտային գրանցումը վերականգնելը մերժելու մասին ՀՀ ԱՆ ՔԿԱԳ գործակալության որոշում):

2.2.2. Մահվան գրանցման դիմումը և դրան ներկայացվող պահանջները

Մահվան գրանցման համար նոտարին կարող է դիմել ցանկացած անձ՝ անկախ նրա բնակության կամ գտնվելու վայրից:

Դիմումը պետք է պարունակի՝

(1) նշում առ այն, թե ինչ նպատակի համար է դիմողին անհրաժեշտ տվյալ փաստի հաստատումը (օրինակ՝ դիմողին անհրաժեշտ է մահվան պետական գրանցում՝ մահացածի ժառանգությունը ձևակերպելու համար),

(2) դիմողի կողմից պատշաճ փաստաթղթեր ստանալու (առկա է քաղաքացիական կացության ակտային գրանցումը վերականգնելը մերժելու մասին ՀՀ ԱՆ ՔԿԱԳ գործակալության գրությունն առ այն, որ հնարավոր չի եղել կատարել մահվան ակտի պետական գրանցում, քանի որ չի ներկայացվել մահվան պետական գրանցման հիմքերը) կամ կորցրած փաստաթղթերը վերականգնելու անհնարինությունը հաստատող ապացույցներ:

2.2.3. Մահվան գրանցման համար դիմում ներկայացնելիս վճարման ենթակա պետական տուրքը

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 21.2-րդ մասի «գ» կետի համաձայն՝ մահվան գրանցումը հաստատելու համար նոտարական գրասենյակը գանձում է պետական տուրք՝ հետևյալ դրույքաչափով՝ բազային տուրքի կրկնապատիկի չափով (այն է՝ 2000 ՀՀ դրամ):

Բազային տուրքի չափ է սահմանվում 1000 դրամը:

2.2.4. Մահվան գրանցումը հաստատելու վերաբերյալ նոտարական ակտ

Նոտարն ընդունում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու վերաբերյալ նոտարական ակտ, եթե՝

(1) ներկայացված փաստաթղթերը կամ վկայի ցուցմունքը բավարար են իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու համար.

(2) հաստատման ենթակա իրավաբանական նշանակություն ունեցող փաստը բխում է ներկայացված փաստաթղթերում առկա տվյալներից կամ վկայի ցուցմունքից.

(3) բացակայում է նյութաիրավական նորմերի պահանջների հետ անհամապատասխանությունը (այն է՝ բացակայում է օրենսդրական կարգավորումներին անհամապատասխանությունը).

(4) դիմողը հնարավորություն չունի այլ արտադատական կարգով ստանալու կամ վերականգնելու իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հավաստող փաստաթղթերը, կամ դրա հնարավորությունն օրենքի ուժով սպառված է (հնարավորությունը համարվում է օրենքի ուժով սպառված, երբ դիմողն արդեն իսկ դիմել է ՀՀ ԱՆ ՔԿԱԳ գործակալություն կամ այլ համապատասխան իրավասու մարմին, սակայն ստացել է մերժում).

(5) պահպանված են Օրենքի 81.1-ին հոդվածի 4-րդ մասի պահանջները (այն է՝ դիմումը պարունակում է նշում, թե ինչ նպատակի համար է դիմողին անհրաժեշտ տվյալ փաստի հաստատումը, ինչպես նաև բերվում են դիմողի կողմից պատշաճ փաստաթղթեր ստանալու կամ կորցրած փաստաթղթերը վերականգնելու անհնարինությունը հաստատող ապացույցներ), վկայից ցուցմունք վերցնելու դեպքում՝ նույն հոդվածի 4.1-ին մասի պահանջները (այն է՝ դիմողի գրավոր միջնորդության հիման վրա նոտարը կարող է ցուցմունք է վերցնել վկայից: Վկայի ներկայությունն ապահովում է դիմողը, ընդ որում՝ նոտարի մոտ ցուցմունք տալը վկայի իրավունքն է: Վկայից ցուցմունք վերցնելիս նոտարը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթներով՝ այնքանով, որքանով դրանք կիրառելի են նշյալ հոդվածի դրույթների նկատմամբ³).

(6) իրավաբանական նշանակություն ունեցող փաստն անվիճելի է:

Վերոնշյալ պահանջները պահպանված չլինելու դեպքում նոտարը մերժում է փաստի հաստատումը (ընդ որում՝ վերոնշյալ պահանջները պետք է պահպանված լինեն միաժամանակ):

³ Նոտարը նախազգուշացնում է վկային սուտ ցուցմունք տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին, որի վերաբերյալ վկան ստորագրում է, և որը կցվում է նոտարական գործին: Ցուցմունքն արձանագրում է նոտարը, այն ստորագրում է վկան, և արձանագրությունը կցվում է նոտարական գործին: Ցուցմունքը կարող է նաև ձայնագրվել, որի դեպքում ձայնագրման կրիչը կցվում է նոտարական գործին:

Անձր, որի շահերը շոշափում է նոտարի գործողությունը, կամ անձր, որին մերժվել է նոտարական գործողություն կատարելը, կարող է կատարված նոտարական գործողությունը կամ նոտարական գործողության կատարումը մերժելը բողոքարկել ՀՀ վարչական դատարան:

2.3. ՄԱՀՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 237-րդ հոդվածի 2-րդ մասը փաստերի հաստատման վերաբերյալ գործերի շարքին է դասում, ի թիվս այլնի, նաև մահվան գրանցման վերաբերյալ գործերը:

2.3.1. Դատական կարգով մահվան պետական գրանցման պարտադիր նախապայմանը

Դատարանն իրավաբանական նշանակություն ունեցող փաստերը հաստատում է միայն այն դեպքում, եթե այդ փաստերի հաստատման փաստաթղթերի այլ կարգով ընդունումը կամ կորցրած փաստաթղթի վերականգնումը անհնար է այլ միջոցներով:

Որպես դիմողի կողմից պատշաճ փաստաթղթերը ստանալու անհնարինությունը հաստատող ապացույց պետք է ներկայացվի արտադատական կարգով, մասնավորապես՝ ՀՀ ԱՆ ՔԿԱԳ գործակալության կամ այլ համապատասխան իրավասու մարմնի կողմից, ինչպես

նան «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման մերժումը, այսինքն՝ դիմողը պետք է սպառի արտադատական կարգով իրավաբանական փաստի հաստատման հնարավորությունը:

2.3.2. Մահվան պետական գրանցման վերաբերյալ գործերի տարածքային ընդդատությունը

Առաջին ատյանի դատարանը, գործերի տարածքային ընդդատությանը համապատասխան, հաստատում է այն փաստերը, որոնցից կախված է քաղաքացիների կամ իրավաբանական անձանց անձնական կամ գույքային իրավունքների ծագումը, փոփոխումը կամ դադարումը:

Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման վերաբերյալ գործերը քննվում են դիմողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակվելու վայրի դատարանում:

2.3.3. Մահվան պետական գրանցման դիմումը և դրան ներկայացվող պահանջները

Դիմումը պետք է պարունակի՝

(1) դատարանի անվանումը, որին ներկայացվում է հայցադիմումը,

(2) դիմողի անունը,

(3) հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն, ծանուցման հասցեն (եթե այն տարբերվում է հաշվառման (գտնվելու) վայրի հասցեից), այդ թվում՝ հայցվոր քաղաքացու անձը հաստատող փաստաթղթի տվյալները (այսուհետ՝ անձնագրային տվյալներ),

(4) այն փաստերը, որոնց վրա հիմնվում է դիմումը,

(5) դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի և ապացույցների ցանկը,

(6) նշում առ այն, թե ինչ նպատակի համար է դիմողին անհրաժեշտ տվյալ փաստի հաստատումը,

(7) դիմողի կողմից պատշաճ փաստաթղթեր ստանալու կամ կորցրած փաստաթղթերը վերականգնելու անհնարինությունը հաստատող ապացույցներ:

Վերոնշյալ պայմաններից որևիցե մեկի խախտումը հանգեցնում է դատարանի կողմից դիմումի վերադարձման:

2.3.4. Մահվան պետական գրանցման դիմաց զանձվող պետական տուրքը

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ներկայացվող

հատուկ վարույթի գործերի վերաբերյալ դիմումների համար գանձվում է պետական տուրք՝ բազային տուրքի 20-ապատիկի չափով (այն է՝ 20.000 ՀՀ դրամ):

2.3.5. Դիմումի վերադարձման հիմքերը և այն շտկելու ժամկետները

Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման դիմումի նկատմամբ տարածվում են հայցադիմումի համար սահմանված պահանջները, ուստի՝ Դատարանը վերադարձնում է հայցադիմումը (սույն դեպքում՝ դիմումը), եթե.

(1) չեն պահպանվել Օրենսգրքով հայցադիմումի ձևին, բովանդակությանը և կից փաստաթղթերին ներկայացվող պահանջները,

(2) չի ներկայացվել օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը կամ համապատասխան գանձապետական հաշվին փոխանցումը՝ հավաստող համապատասխան ծածկագիրը՝ տրամադրված վճարահաշվարկային կազմակերպության կողմից, իսկ այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումից ազատելու, դրա վճարումը հետաձգելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն, ապա բացակայում է դրա վերաբերյալ միջնորդությունը, կամ դատարանն այն չի բավարարել,

(3) հայցադիմումը ստորագրված չէ, կամ ստորագրել է այն ստորագրելու լիազորություն չունեցող անձը,

(4) հայցվորը չի պահպանել մինչև դատարան դիմելը կողմերի միջև առկա վեճի կարգավորման օրենքով նախատեսված արտադատական կարգը:

Այն դեպքերում, երբ չեն պահպանվել դիմումի ձևին, բովանդակությանը և կից փաստաթղթերին ներկայացվող պահանջները, այդ թվում՝ դիմումին չի կցվել պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը կամ համապատասխան գանձապետական հաշվին փոխանցումը հավաստող համապատասխան ծածկագիրը, կամ դիմումն ստորագրված չէ, դատավորի աշխատակազմը կարող է հաղորդակցության միջոցով (առկայության դեպքում) տեղեկացնել Դիմողին դիմումում առկա թերությունների մասին՝ առաջարկելով եռօրյա ժամկետում վերացնել դրանք: Նման միջոցով տեղեկացման անհնարինության դեպքում դատավորի աշխատակազմը նույն ժամկետում կարող է կազմել դիմումում առկա թերությունների մասին արձանագրություն՝ նշելով առկա թերություններն՝ արձանագրությունն ստանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում վերացնելու անհրաժեշտության մասին: Նշված արձանագրությունը ոչ ուշ, քան կազմման հաջորդ օրն ուղարկվում է հայցվորին:

Նշված թերությունները չվերացվելու կամ դիմումը վերադարձնելու այլ հիմքերի առկայության դեպքում առաջին աստիճանի դատարանը որոշում է կայացնում դիմումը վերադարձնելու մասին:

Այն դեպքերում, երբ դիմումում առկա թերությունների վերացման համար դիմողը չի

տեղեկացվում, այդ թվում՝ երբ արձանագրություն չի կազմվում, առաջին ատյանի սահմանված ժամկետում կայացնում է դիմումը վերադարձնելու մասին որոշում՝ այն դիմումի և դրան կից փաստաթղթերի հետ ուղարկելով դիմողին:

Դիմումի թերությունները վերացնելու համար Դատարանը տրամադրում է եռօրյա ժամկետ՝ սկսած դիմումը վերադարձնելու մասին որոշումն ստանալու պահից:

Եռօրյա ժամկետում դիմումի թերությունները վերացվելու և այն դատարան կրկին ներկայացվելու դեպքում դիմումը համարվում է առաջին ատյանի դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը:

3. ՀԱՅՐՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԶՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

3.1. ՀԱՅՐՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԶՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ՝ ՀՀ ՔԿԱԳ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ

«Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ գլուխը սահմանում է հայրության ճանաչման պետական գրանցման դիմումի վերաբերյալ կարգավորումները:

3.1.1. Հայրության ճանաչման պետական գրանցման հիմքերը

Հայրության ճանաչման պետական գրանցման հիմքերն են՝

(1) երեխայի ծննդյան պահին ամուսնության մեջ **չգտնվող մոր** և երեխայի նկատմամբ իրեն **հայր** ճանաչող անձի **համատեղ** հայտարարությունն առ այն, որ երեխան սերվել է հայտարարություն ներկայացնող անձից.

(2) **Օրենքով նախատեսված դեպքերում** մոր հետ ամուսնության մեջ **չգտնվող**՝ երեխայի նկատմամբ իրեն հայր ճանաչող անձի հայտարարությունն առ այն, որ երեխան սերվել է իրենից.

(3) «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով նոտարի հաստատած իրավաբանական փաստի մասին նոտարական ակտը կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած համապատասխան վճիռը:

Հայրության ճանաչման գրանցումը կատարվում է առանց անձի տարիքային սահմանափակման, որի նկատմամբ այն ճանաչվում է:

3.1.2. Հայրության ճանաչման պետական գրանցման դիմում ներկայացնելու կարգը

Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման կամ օրենքով սահմանված այլ գործառույթներ կատարելու նպատակով դիմումները գործակալություն են ներկայացվում Էլեկտրոնային եղանակով կամ սպասարկման կենտրոնների միջոցով:

Հայրության ճանաչման պետական գրանցման համար երեխայի մոր և երեխայի նկատմամբ հայր ճանաչող անձի համատեղ դիմումը կարող է տրվել երեխայի մոր **հղիության ընթացքում, ծննդի պետական գրանցման ժամանակ կամ դրանից հետո**:

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով նոտարի հաստատած իրավաբանական փաստի մասին նոտարական ակտի կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած համապատասխան վճռի հիման վրա հայրության ճանաչման պետական գրանցման համար դիմումը կարող է ներկայացվել բացառապես երեխայի ծննդի պետական գրանցումից հետո՝ շահագրգիռ անձի կողմից:

3.1.3. Հայրության ճանաչման պետական գրանցման դիմումը և դրան ներկայացվող պահանջները

Հայրության ճանաչման պետական գրանցման համար ներկայացվում են՝

(1) համատեղ դիմումի դեպքում՝ երեխայի նկատմամբ իրեն հայր ճանաչող անձի և երեխայի մոր անձը հաստատող փաստաթղթերը.

(2) երեխայի ծննդի գրանցման մասին վկայականը կամ ակտային գրանցման տվյալները, եթե հայրության ճանաչման գրանցումը կատարվում է երեխայի ծննդի պետական գրանցումից հետո.

(3) երեխայի մոր հղիությունը հաստատող բժշկական տեղեկանքը, եթե հայրության ճանաչման մասին դիմումը ներկայացվում է մինչև երեխայի ծնվելը.

(4) երեխայի նկատմամբ իրեն հայր ճանաչող անձի անձը հաստատող փաստաթուղթը և երեխայի մոր բացակայության մասին իրավասու մարմնի տված փաստաթուղթը (մոր մահվան վկայականը կամ տեղեկանքը, նրան անգործունակ ճանաչելու կամ մահացած կամ անհայտ բացակայող ճանաչելու կամ նրան ծնողական իրավունքներից զրկելու մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը) և **երեխայի կենսաբանական հայր հանդիսանալու վերաբերյալ ԴՆԹ-ի (դեզօքսիռիբոնուկլեինաթթու) որոշումը.**

(5) չափահաս անձի համաձայնությունը՝ իր նկատմամբ հայրություն ճանաչելու դեպքում.

(6) տասը տարին լրացած երեխայի համաձայնությունը, եթե հայրության ճանաչման պետական գրանցման հետևանքով նախատեսվում է փոխել նաև նրա անունը կամ ազգանունը.

(7) «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով նոտարի հաստատած իրավաբանական փաստի մասին նոտարական

ակտը կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած համապատասխան վճիռը և դիմողի անձը հաստատող փաստաթուղթը:

Հայրության ճանաչման մասին դիմումի մեջ նշվում են հետևյալ տեղեկությունները.

(1) երեխայի ազգանունը, անունը, հայրանունը (մինչև հայրության ճանաչումը), սեռը, ծննդյան վայրը և ժամանակը, երեխայի ծննդի ակտային գրանցման ժամանակը և համարը.

(2) հայրության ճանաչումից հետո երեխայի անունը, հայրանունը, ազգանունը, եթե դիմողը ցանկանում է դրանք փոխել.

(3) երեխայի հոր մասին տեղեկություններ՝ անունը, հայրանունը, ազգանունը, ինչպես նաև ծննդյան վայրը և ժամանակը, քաղաքացիությունը, բնակության վայրը, ազգությունը՝ ըստ ցանկության.

(4) երեխայի մոր տվյալները՝ համաձայն երեխայի ծննդի ակտային գրանցման.

(5) երեխայի ծնողների անձը հաստատող փաստաթղթի տվյալները.

(6) հայրության ճանաչման համար հիմք հանդիսացող փաստաթղթի տեսակը և տվյալները:

Հայրության ճանաչման պետական գրանցման դիմաց գանձվում է պետական տուրք՝ 10.000 ՀՀ դրամ:

[Հայրության ճանաչման պետական գրանցման դիմումի ձևանմուշ](#)՝ Ձևաթուղթ N 1 (համաձայն՝ ՀՀ Արդարադատության նախարարի՝ 2022թ. հուլիսի 14-ի N 373-Ն հրամանի՝ «Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման

դիմումների, քաղաքացիական կացության ակտային գրանցումների, դրանց հիման վրա կատարվող հաղորդումների ձևանմուշները հաստատելու մասին»):

3.1.4. Հայրության ճանաչման պետական գրանցման կարգը

Հայրության ճանաչման պետական գրանցումը կատարվում է դիմումը և Օրենքով սահմանված վերոնշյալ փաստաթղթերը ՀՀ ԱՆ ՔԿԱԳ մարմին ներկայացնելու **նույն աշխատանքային օրը**:

Հայրության ճանաչման ակտային գրանցման հիման վրա երեխայի ծննդի ակտային գրանցման մեջ Օրենքով սահմանված կարգով կատարվում են այն բոլոր տվյալների փոփոխությունները, որոնք բխում են հայրության ճանաչման ակտային գրանցման տվյալներից:

Երեխայի հայրության ճանաչման պետական գրանցման տեղեկությունները էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով անհապաղ փոխանցվում են սոցիալական ծառայություններ տրամադրող մարմին:

Եթե երեխայի ծնունդը գրանցել է օտարերկրյա պետությունը, ապա հայրության ճանաչման պետական գրանցումը կարող է կատարվել Հայաստանի Հանրապետությունում, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով: Օտարերկրյա պետության գրանցած ծննդյան ակտային գրանցման հիման վրա կատարված հայրության ճանաչման պետական գրանցման դեպքում դիմողին տրամադրվում է հայրության ճանաչման վկայական, և կատարված հայրության ճանաչման պետական գրանցման մասին հաղորդվում է

երեխայի ծննդի ակտային գրանցման վայր՝
Հայաստանի Հանրապետության միջազգային
պայմանագրերով սահմանված կարգով:

3.1.5. Հայրության ճանաչման պետական գրանցման մերժման հիմքերը

Հայրության ճանաչման պետական գրանցումը
մերժվում է, եթե՝

(1) երեխայի ծննդի մասին ակտում որպես
երեխայի հայր նշված է այլ անձ, որի վերաբերյալ
տեղեկությունները գրառվել են երեխայի մոր
ամուսնության պետական գրանցման հիման
վրա, կամ եթե առկա է երեխայի նկատմամբ
նախկինում հայրության ճանաչման պետական
գրանցում.

(2) հայրության ճանաչման պետական
գրանցման վարույթի ընթացքում պարզվում է, որ
դիմում ներկայացնող անձը երեխայի հայրը չէ:

Հայրության ճանաչման պետական գրանցումը
չի կարող մերժվել, եթե երեխայի հոր մասին
տեղեկությունները գրանցվել են Օրենքով
սահմանված կարգով՝ մոր ցուցումով, բացառու-
թյամբ Օրենքի 9-րդ հոդվածով⁴ սահմանված

⁴ Օրենքի՝ «Գործակալություն ներկայացված տեղեկատվության արժանահավատության կանխավարկածը» վերտառությամբ 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման կամ սույն օրենքով նախատեսված այլ գործառույթ իրականացնելու նպատակով դիմողի ներկայացրած տեղեկատվությունը համարվում է արժանահավատ, քանի դեռ չի ապացուցվել հակառակը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործակալությունը, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի, ներկայացված տեղեկությունների իսկության ստուգում չի իրականացնում և պատասխանատվություն չի կրում դրա հետևանքով առաջացած հնարավոր որևէ վնասի համար: Սույն մասով նախատեսված պատասխանատվության սահմանափակումը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ գործակալության աշխատակիցը

դեպքի, կամ այն դեպքում, երբ հայրության ճանաչման պետական գրանցումը կատարվում է «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ նոտարի հաստատած իրավաբանական փաստի մասին նոտարական ակտի կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած համապատասխան վճռի հիման վրա:

ՀԱՎԵԼՎԱԾ – ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԵՐ

Տարատեսակ դիմումների ձևանմուշներ կարող եք ներբեռնել ստորև.

[Ծննդի պետական գրանցման մասին դիմումի ձև.](#)

[Հայրության ճանաչման պետական գրանցման մասին դիմումի ձև.](#)

[Ամուսնության պետական գրանցման մասին դիմումի ձև.](#)

[Ամուսնալուծության պետական գրանցման դիմումների ձևեր.](#)

[Մահվան պետական գրանցման մասին դիմումի ձև.](#)

[Որդեգրման պետական գրանցման մասին դիմումի ձև.](#)

[Քաղաքացիական կացության պետական գրանցման ակտը վերականգնելու դիմումի ձև.](#)

[Դատարան դիմումի օրինակելի ձև \(մահվան վերաբերյալ իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու պահանջի մասին\).](#)

Դատարան դիմումի օրինակելի ձև
(աշխատանքային ստաժի վերաբերյալ
հրավարանական նշանակություն ունեցող
փաստը հաստատելու պահանջի մասին).

Դատարան դիմումի օրինակելի ձև
(աշխատանքային ստաժի վերաբերյալ
հրավարանական նշանակություն ունեցող
փաստը հաստատելու պահանջի մասին).